ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի մայիսի 15-ին տեղի ունեցավ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստը, որին մասնակցում էին Խորհրդի նախագահ Արա Շիրինյանը, անդամներ՝ Նարա Շլեպչյանը, Մերուժան Տեր-Գուլանյանը, Ստեփան Զաքարյանը, Լևոն Գալստյանը: Օրակարգային հարցերի քննարկումից հետո ընդունվեցին հետևյալ որոշումները.

1. Խորհուրդը հաստատեց «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2019թ. բյուջեում առաջարկված փոփոխությունները, որոնք կապված են Գյումրի քաղաքի ռադիոհաղորդակը հզորացնելու, սփռման որակը բարձրացնելու և աշխարհագրությունը մեծացնելու հետ:

2. Խորհուրդը հաստատեց «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության հաստիքացուցակում առաջարկվող փոփոխությունը, որը վերաբերում է տեխնոլոգիաների բաժնի ղեկավարի աշխատանքային նկարագրին և տվյալ հաստիքի աշխատավարձի բարձրացմանը:

3. Խորհուրդը հաստատեց «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի և «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ի լուծարման միջանկյալ հաշվեկշիռները:

4. Խորհրդի անդամները քննարկեցին Հանրային հեռուստատեսության մի քանի հաղորդաշարեր, վերլուծելով թերություններն ու առաջարկելով բարելավման եղանակներ: Մասնավորապես նշվեց «Գերազանցիկը» հաղորդաշարի ձևաչափի անորոշությունն ու խաղընթացի գրավչության պակասը, երեխաների պասիվ, ձևական ներգրավվածությունը խաղին: Նշվեց նաև հաղորդավարի՝ ուսուցողական վիկտորինան ժամանցային շոու դարձնելու ավելորդ միտումը: Անդրադարձ եղավ «Կտոր մը Հայաստան» հաղարդաշարին: Քննարկումը փաստեց, որ հերոսների երկարաշունչ մենախոսությունը կաղրում, պատկերաշարի և գործողության սակավությունը չեն համապատասխանում հեռուստատեսային նյութի պատրաստման նվազագույն պահանջներին:

Խորհրդի հաջորդ նիստը նշանակվեց 2019 թվականի մայիսի 24-ին: